Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Этимологическая

1904

Сергеевичу

835
И-26

30 MAY 2011

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3

Զուլթակահարը.
Արջը և գողը.
Խելոք ձին.
Հնարագէտ ագռաւը.
Կողոպտուած աղջիկ.
Երկու եղբայր.

8—10 տարեկաններեր համար
(աւելի փոքրերին պատմելու նիւթ.)

Գերմաներէնից փոխադրեց
Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի
1904

83Մ.
Մ-26

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3

8—10 տարեկանների համար
(աւելի փոքրերին պատմելու նիւթ.)

Գերմաներէնից փոխադրեց
Ա. ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ն. Ա. ՄԱՍՍԻՍԻԱՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի
1904

24 .04. 2015

1412

Дозволено цензурою 22 Января 1904 г. г. Тифлисъ.

9- 6187
41

ՋՈՒԹԱԿԱՀԱՐԸ

Մեծ մեծ քաղաքում մի ծեր զինուոր կար. նա այնչափ թոյլ էր, այնչափ ծերացած, որ անկարող էր աշխատանք անել, իրան կերակրել։ Դոնէ դուռ ման գալ ողորմութիւն խնդրել՝ նա անկարող էր և չէր էլ ուզում։ Մի օր միտքն ընկաւ, որ փոքր հասակում հօրից սովորել էր քիչ ջութակ ածել։ Պատից վեր առաւ փոշոտ գործիքը, մի փոքր փորձեց, կրկնութիւն արաւ, ծերուկը շան հետ դուրս եկաւ այգի։ Այգին շատ մեծ էր և ամեն տեսակ մարդկանցով լիքը. ամենքը այնտեղ ուրախ զբօսնում, զարթ, գոհ սրտով բաւականութիւն գտնում, կրկին տուն դառնում. այսպէս շարունակ ամեն օր կրկնում։

Ծերուկ զինուորը մի մեծ ծառի տակ առանձին նստած՝ ջութակ էր ածում. շունն էլ

մօտին գլխարկը բռնած՝ կանգնած նայում էր։ Անց ու դարձ անող մարդկանցից ոմանք տեսնելով ծերին՝ մեղքանում էին, շան գլխարկի մէջ մի քանի կոպէկ գցում անցնում էին։ Այսպիսով ծերը փող էր հաւաքում, իրան և շանը մի կերպ կերակրում։ Մի անգամ ծերը ամբողջ օրը նստեց, ածեց հա ածեց մինչև ուշ գիշեր, բայց նա ոչոքից կոպէկ չստացաւ։ Յոգնածութիւնից նա թուլացած էր. քաղցածութիւնից աչքերը մթնեց. խեղճը չգիտէր, ի՞նչ պիտի անէր. մէկ աֆ էր քաշում, մէկ հառաչում էր, խոշոր արտասուք նրա աչքերից առատ թափւում էր. քար պէտք է լինէր, որ նրան տեսնէր, չխղճահարուէր։

Վերջապէս մի մարդ, մաքուր հագնուած, անցաւ այդտեղով. երբ յանկարծ տեսաւ թշուառ ծերուկին, ինքն էլ արտասուեց, սաստիկ կարմրեց, մի արծաթ դրամ նրա ձեռքը դրեց, խնդրեց ջութակը. ծերուկը տուեց։

Անցորդ պարոնը սկսեց ածել. բայց ի՞նչպէս ածել։ Գործիքը ձեռքում այնպէս էր ածում, նուրբ ձայներ հանում, յանկարծ բարձրանում, քաղցր զեղգեղում, ցածր ձայներով մարդկանց գրաւում, կապում կաշկանդում, որ ամեն մարդ էլ ջութակի ձայնից զմայլած կանգնեց, հիացած լսեց և խումբ խումբ դիմեց դէպի ջութակը, որ ամեն մի ձայն, ամեն մի հնչիւն լսէ կըշտանայ, հոգով ուրախանայ։

Ծերուկ գինեւորն էլ ապշած նայում էր և զարմանում էր. մի՞թէ այդպիսի երկնային ձայներ իր ջութակիցն էր։ Նա բերանը բաց դեռ շատ կը կանգնէր, եթէ ածողը նրան չհրաւիրէր գլխարկը մարդկանց մէջը մտնելու։ Ինքը գլխարկով մտաւ մարդկանց մէջը, բայց նա չէր անցել բազմութեան կէսը, գլխարկը լցւեց լիքը դրամով. շունը վնգալով հազիւ էր տանում, այնչափ որ ծանր էր։ Ինքը մի քանի անգամ մտնելով եկաւ և ամեն անգամ լիքը յետ դարձաւ. տէրն էլ չգիտէր, ո՞րտեղ հաւաքէր այդչափ շատ փողը։

Վերջապէս մարդը ածեց և մի երգ. յանկարծ ամբոխն էլ՝ առանց հրաւիրելու՝ ձայնով երգեցին սիրած մարդու երգը։ Ածողն հեռացաւ բազմութեան միջից։ Այժմ հարցրին, ո՞վ էր ածողը, այդ հրաշագործը։ Շատ որոնելով վերջապէս իմացան, որ աշխարհահռչակ ջութակահարն էր և այժմ միայն ծերին օգնելու համար ածել էր։

Բարի ծերուկը հնար չունեցաւ վարպետ ածողին իր երախտիքը յայտնել, գոհանալ.

միայն մինչև մահ օրհնում էր նրան, գովաբանում էր նրա համբաւը և բարի սիրտը։

ԱՐՋԸ ԵՒ ԳՈՂԸ

Իրիկնադէմին գիւղի պանդոկը մտան երկու մարդ մի մեծ արջի հետ։ Արջը վարժւած էր ու լաւ խաղում էր, տիրոջ հրամանը ճիշտ կատարում էր։ Պանդոկի տէրը մի փոքր առաջ իր չաղացրած խոզը ծախել էր. նրա գոմում էլ արջին տեղ տւին, գուռը փակեցին։

Գէս գիշերին մօտ մի չար գող եկաւ, ուզեց չաղացրած խոզին գողանալ. նա դեռ չգիտէր, թէ խոզը ծախւած էր։ Շատ դժւար կերպով գուռը կոտրեց, առանց ճրագի գոմի մէջ մտաւ և սուսիկ փուսիկ ձեռքերը պարզեց, որ խոզին բռնէ։ Յանկարծ շօշափեց նա արջի թաթը՝ կարծելով խոզն է, շատ ամուր բռնեց։ Արջը բարկացած քնից արթնացաւ և իր հաստ ուժեղ թաթերով գողին պինդ բռնեց ու այնպէս սեղմեց, գլխին հասցրեց, որ գողը ցաւից էլ չհամբերեց, բարձր լրտւեց, օգնութեան կանչեց։

Պանդոկի մարդիկը շտապ դուրս թռան, վազեցին մարդուն, օգնութեան հասան. բայց ո՞վ կարող էր կատաղի արջի սուր սուր ճանկերից նրան ազատել։

Գողի բաղդիցն էր, որ արջի տէրը շուտ վրայ հասաւ, գողին շատ դժւար արջի ձեռքիցը մի կերպ ազատեց։ Արիւնը հոսում էր նրա վրայից, հազիւ հազ ոտքի կարող էր կանգնել։

—Շատ լաւ է, տեղն է, ասացին մարդիկ, գողը այդպիսի պատժի արժան է—։

Պանդոկատէրը նրան խիստ պահեց և առաւօտեան դատաւորին տւեց, որ իր գողութեան պատիժն ստանայ։

ԽԵԼՕՔ ԶԻՆ

Մի վաճառական ձիով գնում էր. թէև արևը վաղուց էր մտել, ամբողջ աշխարհը խաւարով պատել, բայց նա դեռ պէտք է անտառով անցնէր։

Երբ մտաւ անտառ, ձիուց վար իջաւ, որ ճանապարհը ուղիղ որոշէ և չկորցնէ։ Սանձիցը բռնած շտապ գնում էր, որ շուտ տեղ հաս-

նի, վանդի չպատահի։ Մոքի հետ ընկած այսպէս գնում էր, երբ ձին գլխովը տիրոջը խփեց։ Տէրը չհասկացաւ, թէ դա ի՞նչ բան է կամ ինչի նշան. նա կարծեց, թէ ձին մի բանից խրտնել է, դրա համար էլ իսկոյն յետ դարձաւ, գլուխը շփեց, քաղցր խօսքերով հանգըստացրեց և շարունակեց։

Ճատ չգնացին, երբ ձին գլխովը տիրոջը խփեց. վաճառականը էլ չհամբերեց, յետ դարձաւ, ձիու գլխին պինդ զարկեց։ Ձին հանգստացաւ, բայց դա շատ երկար չշարունակեց։

Նա երրորդ անգամ տիրոջը խփեց. այս անգամ տէրը ձիուն չպատժեց, շուտ գլխի ընկաւ, շորս կողմը նայեց և ի՞նչ նա տեսաւ։ Ձիու փորկապը քանդել ընկել էր. թամբն էլ չկար. յետևը կապած թանկագին շորերը ընկել կորել էին։

Վաճառականը իսկոյն յետ դարձաւ, շորերը գտաւ, լաւ կարգի բերեց և ձիուն զովեց։ Նա սաստիկ ցաւեց, որ իզուր տեղը իր խելօք ձիուն պատժեց, ցաւեցրեց։

ՀՆԱՐԱԳԷՏ ԱԳՌԱՒԸ

Ամառն էր, օրը սաստիկ տաք. ամեն կենդանի շոգիցը փախած՝ իր բունն էր մտել. այդ միջոցին էր, որ երկու ագռաւ մի ամանի մօտ շարշարւում էին, որ նրա միջից մի քիչ ջուր խմեն, էլ ծարաւ չզգան։ Ամանի մէջ թէև ջուր շատ կար, բայց նրա բերանը այնչափ երկար էր, որ ագռաւների հասալիկ վիզը ջրին չէր հասնի։ Ճատ շարշարեցին, փորձեր փորձեցին, ուզեցին ամանը մի կերպ վայր ձգել, որ ջուրը թափւի, բայց այդ չյաջողւեց։ Նոյնպէս չյաջողւեց ամանը կոտրել։ Նրանցից մէկը ուժասպառ եղած, յուսահատւեցաւ, թողեց հեռացաւ։

Միւս ագռաւը թէև յոգնած էր և շատ պապակած, բայց չհեռացաւ. նա շատ մտածեց, ինքն իրան ասաց. „Եթէ մարդ ուզէ, նա շատ բան կ'անէ“։ Ուրեմն պէտք է նորից մտածել, նոր փորձեր անել և չվհատւել. այսպէս ասելով, մի փորձ էլ արաւ։

Մեծ համբերութեամբ, կտցովը մէկ մէկ աւազ հաւաքեց և ամանի մէջ բոլորը լցրեց։

Կէս ժամ չանցաւ, ջուրը բարձրացաւ։ Ագռաւը ուրախ՝ կուշտ կուշտ ջուր խմեց, ծարաւը կատրեց, թռղեց հեռացաւ։

ԿՈՂՈՊՏԻԱԾ ԱՂՋԻԿ

Քաղաքից հեռու, անտառի խորքում մի գիւղ կար շինուած. բնակիչները հազիւա աշխատում, ուրախ կեանք վարում և ամենայն օր Աստուծուն փառք տալիս ու այդպէս ապրում։ Միևնոյն գիւղում մի շատ բարի մարդ մի աղջիկ ունէր Աննա անունով։

Աննան դեռ փոքր էր, չորս տարեկան էր. նա ուրախ, զուարթ, կայտառ աշխոյժ էր. նրա թշերից կարմիր վարդ կաթում, իսկ խելօք աչքերը ամենքին գրաւում։ Մի օր աղջիկը գիւղի մօտ նստած՝ հանգիստ խաղում էր. ինչպէս պատահեց, այդ Աստուած գիտէ, նրա մօտ եկաւ մի շոր պառաւ կին։ Պառաւը նրան շատ շատ հաւանեց, դրա համար էլ խորամանկ լեզուով իրան գրաւեց.

Խելօք աղջիկ, ինչ սիրուն ես,
Իմ աղջկան շատ նման ես,

Ասա տեսնեմ, ումի աղջիկն ես.
Անունդ ինչ է. հայր, մայր ունե՞ս։
Քեզ սիրում եմ որդուս նման,
Դրա համար առ խաղալիք և պատկերներ,
Խաղա այնչափ, որչափ կուզես։

Խաղալիքներին և պատկերներին Աննան հաւանեց, դրա համար էլ բաւական երկար և սիրով խաղաց։

,,Դեռ դրանք ինչ են, ասաց շոր կինը. եթէ ինձ հետ գաս՝ երթանք մեր տունը, ես քեզ դրանից շատ լաւերը կրտամ խաղալու և քեզ կրնծայեմ։ Գնանք, սիրելիս, շտապենք գընանք, որ այդ ամենը դու շուտ ունենաս''։

Աղջիկը խաբուեց շոր կնոջ խօսքից, զրոյց անելով նրա հետ գնաց, թէ որչա՞փ հեռու, այդ Աստուած գիտէ. միայն գիւղիցը շատ շատ հեռացան։

Վերջապէս հասան պառաւի տունը։ Աննան երբ տեսաւ նոր նոր խաղալիք, սիրուն պատկերներ և փոքրիկ զառներ, շատ ուրախացաւ. խաղաց հա խաղաց մինչև երեկոյ։ Երբ ուզեց դառնալ իր մայրիկի մօտ, պառաւը նրան էլ թոյլ չտուեց. ,,Դու այստեղ կրնաս, էլ տուն չես դառնայ. քո տունը այս է, քո մայրը ես եմ և

քո անունը Էմմա է լինելու և ոչ թէ Աննա. հասկացա՞ր հիմայ՝՝. ասաց պառաւը, դուռը պինդ փակեց, թողեց հեռացաւ։

Աննան սարսափեց, արտասուք թափեց, գոչեց, պաղատեց, բայց ոչ մի օգուտ։

Գիշեր ու ցերեկ միշտ արտասուում էր, մայրիկ կանչելով նա աղերսում էր. բայց ո՞վ էր լսում, ո՞վ էր իմանում։ Փակւած սենեակում, շատ դէս դէն ընկաւ, փախչելու հնար երբէք չունեցաւ։

Պառաւ չար կինը ոչ թէ չլսեց թշւառ աղջկայ ապի արտասուք, այլ պինդ գոռալով նրան սաստում էր, փայտով ծեծում էր, որ հանգիստ մնայ, իր ասածն անէ։ Յոգնած բեզարած աղջիկը թմրեց և հանգիստ քնեց։

Ահա երազում իրանց տան մէջն է, մայրիկի գրկում հանգիստ նստած է. յանկարծ վեր թռչում, վզին փաթաթւում, ճիչ արձակելով մայրիկին կանչում.—Մայրիկ ջան, մայրիկ, պաշտպանիր դու ինձ. տես, չար պառաւը կրկին գալիս է, ինձ տանել կուզէ. օ՜հ, ես չեմ գնայ, նա ինձ ծեծում է, փակում, բանդարկում—։

Մայրիկը նրան պաչում, փայփայում, փոքրիկ Աննայի գլուխը շփում, որ հանգիստ լինի։ Աննան շատ ուրախ ժամեր վայելեց մայրիկի գրկում և հանգիստ քնեց. բայց մէկ էլ յանկարծ սաստիկ վեր թռաւ, քնից արթնացաւ, մայրիկի տեղը պառաւին տեսաւ իրան ձայն տալիս։ Աննան սարսափեց, սրտի խորքիցը խո՜ր խո՜ր ախ քաշեց և առանց ձայնի նրա հետ գնաց։

Երբ Աննան նոյն օրն էլ տուն չդարձաւ, նրա հայր ու մայրն անհանգիստ կերպով ամեն կողմ ընկան, մարդիկ վարձեցին, դրսում ման եկան. էլ տուն ու մարագ, էլ դաշտ ու անտառ, շատ շատ ման եկան, Աննին չգտան. յոյսերը կտրած, գլխակոր, տրտում դէպի տուն դարձան։

Այս դէպքի վրայ անցաւ չորս տարի. մի անգամ Աննի հայր ու մայրը քաղաք գնացին. այնտեղ այդ օրում մի մեծ հանդէս կար։ Ամբողջ քաղաքը ոտքի էր կանգնել, շատ մեծ բազմութիւն գիւղերից եկել այդտեղ էր հաւաքւել. ամեն տեսակ խաղեր, լարախաղացներ մարդկանց գրաւել, իրան էր քաշել։ Բազմութեան մեծ մասը կանգնած նայում էր մի փոքրիկ աղջիկ լարախաղացի։ Նա ճարտար կերպով պարանի վրայ ինչ խաղեր ասես, որ չէր կատարում. շատ թեթև կերպով վեր ու վար ցատկում, ոտքերով կախւում, կրկին վեր թռ-

չում, նոր նոր խաղերով մարդկանց գրաւում
և զարմացնում։ Երբ նա վար իջաւ բազմու-
թեան մէջը փող հաւաքելու, ամենքը սիրա-
նրան տալիս էր, ճարտար աղջկայ շնորհքը զ-
վում, անունը հարցնում։

Աննի մայրիկի սիրտը ճմլւում էր, երբ
նա նայում էր լարախաղացին և ամեն մի ան-
զամ իր փոքրիկ Աննան առաջն էր գալիս
Երբ լարախաղացը մօտեցաւ նրան որ փող հա-
ւաքէ, մայրը սարսափեց, սուր ճիչ արձակեց
և ուշաթափուած գետին փռուեցաւ։ Լարախա-
ղացն էլ բազմութեան հետը կնոջն օգնեց։

Երբ ուշքի եկաւ, աղջիկս, գոռաց և պինդ
փաթաթուեց լարախաղացին ու էլ չթողեց. նա
միշտ գոռում էր, իր կրծքին սեղմում և Աննա
կանչում։

Լարախաղաց Էմման էլ ցնցուեց, մայրիկին
յիշեց և մութ ու խաւար բաւական բաներ նրա
մէջ կրկնուեց։

Մարդիկ հարցրին դրա պատճառը. նրանք
զարմացան, սաստիկ բարկացան, երբ նրա մայ-
րը աղջկայ վրի կարմիր քարերով ոսկէ խաչ
նրանց ցոյց տուեց. Աննի անունն էլ վրան էր
գրուած։ Մայրը ցոյց տուեց աղջկայ պլխի վէր-
քի նշանը, որ փոքր հասակում քարին ընկնե-

լով առաջ էր եկել։

Բանը հասաւ դատի։ Աննի հայր ու մայրը
փաստով ցոյց տուին, որ իրանց աղջիկը չորս
տարի առաջ անհետացել է, այժմ գտնուել։
Աննին փախցնող չար պառաւ կինը և նրա
հետ ուրիշ ընկերներ, խիստ պատիժ կերան
իրանց չարագործ յանցանքի համար։

Աննի հայրն ու մայրը ուրախութիւնից
սաստիկ լաց եղան, որ իրանց որդուն վեր-
ջապէս գտան։ Աննան էլ յիշեց գլխին եկածը
և ուրախացաւ, որ այդ տանջանքից շուտով
ազատուեց։

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

Էլար չկար, երկու եղբայր կար. նրանցից մէկն
ամուսնացած էր, որդիներ ունէր. միւս եղբայրը ոչ մի
ան չունէր, մենակ ապրում էր։ Երկու եղբայրը. հօրից
ժառանգութիւն մի արտ ստացան, որ մէկ տեղ ցանեն,
մէկ տեղ աշխատեն, հաւասար բաժնեն։

Առաջի տարին ցորեն ցանեցին, քաղելուց յետոյ
սրձեր կապեցին, հաւասար երկու դէզեր շինեցին ու
աշտում թողին։

Ամուրի եղբայրը, գիշերն ինքն իրան այսպէս մտա-
ցաց. «Ես մենակ եմ, իսկ իմ եղբայրը շատ որդի ունի.
ինչպէս արդար է, որ ես էլ հաւասար բաժին ստանամ.

չէ, դա ուղիղ չէ, եղբայրս անշուշտ շատ պիտի ստա-
նայ. ուրեմն գնամ դէպի մեր արտը, իմ դէզից նրա
դէզի վրայ դնեմ, որ արդար լինի. եղբայրս այս բանը
դժուար թէ իմանայ»։ Ինչպէս մտածեց այնպէս էլ արեց։

Միևնոյն գիշերը միւս եղբայրը կնոջն ասեց։ «Ա՜յ
կին, մենք իրար միշտ օգնում ենք, մեր որդիները
մեզ ուրախացնում, մխիթարում են, իսկ խեղճ եղբայրս
դեռ շատ ջահել է և ոչինչ չունի, որ մխիթարւի միթէ
դա կեանք է. անարդար գործ է, որ մենք ցորենը հա-
ւասար բաժնեցինք։ Վեր կենամ գնամ, մեր դէզից խուր-
ձեր՝ նրա դէզին դնեմ. նա այդ չի իմանայ, ես ուրախ
կըլինեմ, որ իմ եղբայրը աւել ստանայ»։ Ինչպէս որ ա-
սաց, այնպէս էլ արաւ։

Միւս առաւօտ, երկու եղբայր զարմացած մնացին,
երկուսի դէզն էլ առաջւայ չափ էր. շատ մտածեցին,
պատճառը չգտան։ Երկու եղբայրն էլ երկրորդ և եր-
րորդ գիշերները նոյն բանը արին և ցերեկները նորից
զարմացան։ Ամեն մէկն էլ ուզեց գաղտնիքը մի կերպ
իմանալ. այդ պատճառով էլ չորրորդ գիշերը՝ նրանք
վճռեցին մի տեղ թաղ կենալ, որ տեսնեն ո՞վ է այդպէս
անողը։

Այսպէս մտածած, երկու եղբայրն էլ միաժամանակ
դէզերին մօտեցան. լուսաբանչիւրը մի խուրձ վերցրեց,
որ տանի եղբօր դէզին աւելացնէ և յանկարծ խրձերը
ձեռքերին իրար դէմ դիպան. գաղտնիքը բացւեց։

Մարդիկ լսեցին սիրող եղբայրների բարեսրտու-
թիւնը. նրանց գովեցին, շատ շատ սիրեցին և որպէս
յիշատակ՝ դէզերի տեղը տաճար շինեցին, սէր ու բա-
րութիւն գովաբանեցին։

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ա. Չիլինկարեան. Մանուկների ստախօսութիւն
և նրա առաջն առնելու միջոցներ. 1
« Մանկական գրադարան № 1 . .
« « « № 2 . .
« « « № 3 . .

Ա. Չիլինկարեանի և Տ. Ռաշմաճեանի կազմած
գիտական—ժողովրդական գրադարանից հրատարակել

1) Կենդանիների բնազդն ու հասկացողութի
(սպառուած
2) Ընտանի կենդանիներ (սպառուած)
3) Մեղուներ
4) Ոյժեր (սպառուած)
5) Մագնիսականութիւն (սպառուած)
6) Էլեքտրականութիւն

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Դիմել՝ Александрополь, Типографія К. Саноянца, կամ
Эривань, учителю Ар. Чиливкарянцъ.

4

1412